զնա ի մահուանէ. եւ բազումս ի Քուշանաց անտի կոտորեաց, եւ զբազում զախոյանից զգլուխս բերէր զառաջեաւ: *11* Եւ զՇապուհ թագաւորն Պարսից փրկէր ի նեղութենէն պատերազմին թշնամեաց անտի, ուր արգելին զնա ի խուռն պատերազմին ի զաւրաց անտի: *12* Իսկ իբրեւ եղեւ յորժամ դարձաւ Շապուհ թագաւորն Պարսից յերկիրն Ասորեստանի, եւ մեծ շնորհակալութիւն առնէր ներքինւոյն Դրաստամատայն վաստակոցն, եւ ասէր ցնա Շապուհ թագաւորն Պարսից. Խնդրեա դու ինչ յինէն. զինչ եւ խնդրեսցես՝ տաց քեզ եւ ոչ արգելից: *13* Եւ ասէ Դրաստամատ ցթագաւորն. Ինձ ի քէն այլ ինչ ոչ պիտի, բայց տուր ինձ հրաման, զի երթայց տեսից զբնակ տէրն իմ զԱրշակ արքայ Հայոց. եւ առ մի աւր. իբրեւ ես երթայց առ նա, հրաման տուր արձակել զնա ի կապանացն, եւ ես իշխեցից լուանալ զգլուխ նորա եւ աւծանել, եւ ագուցանել նմա պատմուճան, եւ արկանել նմա բազմականս՝ եւ դնել առաջի նորա խորտիկս, եւ տալ նմա գինի, եւ ուրախ առնել զնա արուեստականաւքն մի աւր ճիշդ: *14* Եւ ասէ թագաւորն Շապուհ. Խիստ են խնդրուածքդ զոր խնդրեցերդ. զի յաւուրց ժամանակաց՝ յորմէ թագաւորութիւնս Պարսից կանկնեալ է, եւ բերդն այն Անյուշ բերդ կոչեցեալ է, չիք ոք մարդ եղեալ ի մարդկանէ՝ որ իշխեցեալ է յիշեցուցանել թագաւորաց զոր յայնմ բերդի եդեալ զոք է թագաւորաց, յիշելով զայն մարդ՝ որ յայնմ բերդի զոք եդեալ է, թող թէ զնա զայր թագաւոր եւ զիմ ընկեր կապեալ եդեալ յայնմ բերդի զհակառակորդն. քան մինչ աշխատ արարեր զմեզ, եւ դու աւադիկ զանձն ի մահ եդիր եւ յիշեցուցեր զԱնյուշն, որ ոչ էին լեալ երբէք աւրէնք թագաւորութեանս Արեաց ի սկզբանէ: *15* Բայց վասն քո՝ զի մեծ վաստակք են առ իս, զոր ինչ խնդրեցերն՝ ե՛րթ, տուեալ լիցի քեզ. բայց քեզ արժան էր զաւգուտ քո անձինդ խնդրել կամ աշխարհս կամ գաւառս կամ գանձս: *16* Բայց յորժամ դու զայդ խնդրեցեր, անցեալ լիցիս զաւրինաւք Արեաց թագաւորութեանս. երթ, տուեալ լիցի քեզ որ ինչ յինէնս խնդրեցեր փոխանակաց քոց[1]:

17 Եւ ետ նմա փուշտիպան մի հաւատարիմ, եւ հրովարտակ՝ արքունի մատանեաւն, զի գնացեալ երթիցէ նա ի բերդն յԱնդմըշն, եւ զիարդ եւ կամք իցէ նորա, զոր աւրինակ եւ խնդրեացն՝ արասցէ կապելոյն Արշակայ, որ յառաջ թագաւորեալն էր ի Հայս: *18* Եւ չոգաւ Դրաստամատն հանդերձ փշտիպանաւն եւ հրովարտակաւն արքունի յԱնուշ բերդն, եւ ետես զտէրն բնակ. եւ արձակեաց զԱրշակ ի կապանացն երկաթեաց ի ձեռակապացն եւ յոտիցն երկաթոց եւ յանրոց պարանոցէն շղթայիցն սարեացն. եւ լուաց զգլուխ նորա, եւ լոգացոյց զանձն նորա: *19* Եւ ագոյց նմա պատմուճան ազնիւ. եւ էարկ նմա բազմականս, եւ բազմեցոյց զնա. եւ եդ առաջի նորա ընթրիս ըստ աւրինաց թագաւորաց, եւ եդ առաջի նորա գինի որպէս աւրէն էր

1 *Թերեւս* փոխանակ վաստակոց քոց